# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.hamaynqapetaran@gmail.com

## ՈՒ Ղ Ե Ր Ձ

«28» մայիսի 2024 թվականի

## ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՒՂԵՐՁԸ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐՎԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Սիրելի ստեփանավանցիներ

Այսօր լրանում է Հայաստանի Առաջին Հանրապետության ստեղծման և Մայիսյան հերոսամարտերում տարած հաղթանակի 106-ամյակը, ինչի առթիվ սիրով շնորհավորում եմ բոլորիս:

Հայոց ազգային խորհուրդը՝ 1918 թվականի մայիսի 28-ին հայտարարեց անկախ Հայաստանի Հանրապետության ստեղծման մասին:

Պետականության վերականգնումը կարևոր հիմք էր՝ հայապահպանության ու լինելիության համար:

Ինքնիշխանությունը կարևոր նշանակություն ունի յուրաքանչյուր ազգի հոգևոր, մշակութային և բազմաթիվ այլ արժեքների պահպանության և իբրև ազգ գոյատևելու համար:

Այսօր մեր երկիրը բազմաթիվ դժվարություններ ու չլուծված խնդիրներ ունի, բայց մեր ամենակարևոր հենարանը մեր պետականությունն է, որի պահպանման գործում յուրաքանչյուրս կարևոր անելիք ունենք. մեր ազնիվ աշխատանքով, նվիրվածությամբ ու հոգատարությամբ պետք է հոգ տանենք մեր հայրենիքի մասին՝ հիմքում ունենալով հզորանալու և ամրանալու ձգտումն ու ջանքը:

Մաղթում եմ խաղաղություն և բարօրություն մեր երկրին:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ**